— Յերկրորդում աւուր (*Նաւակատիք Ս. Տեղեաց, Սեպտ. 14*) ժողովին է սուրբ մատրան և նոյն կանոն կատարի . . . :

*(Ըստ Օրագրութեան Էթէրիա ուխտաւորուհիին).*

— Ս. Յարութեան տաճարէն կ'երթան մեծ եկեղեցին որ կը կոչուի Մարտիրոս. որ և կը գտնուի Գողգոթայի մէջ և խաչին մէկ կողմը. և հոն ըստ աւանդութեան ամէն կիրակի կը կատարուի աղօթք և պաշտամունք:

— Աւագ շաբթուան երբ ըստ աւանդութեան պաշտամունք տեղի կ'ունենայ համախօսին մինչև առաւօտ, ժողովուրդը կը խռնուի Ս. Յարութեան մէջ և Ս. Խաչին առջև. այս կիրակի առաւօտուն ըստ կանոնի կ'երթան մեծ եկեղեցին՝ որ կը կոչուի Մարտիրոս. այսպէս կը կոչուի այն պատճառաւ որ Մարտիրոսը Գողգոթայի մէջ կը գտնուի և Խաչին մէկ կողմը, ուր մեր Տէրը չարչարուեցաւ:

— Ժամը իննին կը հաւաքուին մեծ եկեղեցին՝ որ է Մարտիրոսը, ուր շարունակաբար կ'երգեն սաղմոսներ և երգեր, մինչև գիշերուան ժամը մէկին, կը կարդան օրուան ընթերցուածները աղօթքներու ընդմիջումներով: Երբ ժամանակը կը մօտենայ կը կարդան Օրհնութեան Երգերը. արշալոյսին ժամանակ բոլորովին գիշեր կ'ըլլար, երբ ժողովուրդը Մարտիրոսէն կը մեկնէր և եպիսկոպոսն ալ կ'երթար Ս. Յարութիւն միևնոյն հանդէսով:

— Աւագ երկուշաբթի և Աւագ երեքշաբթի օրերն ալ կ'երթան Մարտիրոսը ու կ'աղօթեն:

— Աւագ հինգշաբթի օրը ժամը ութին ժողովուրդը Ս. Յարութեան ժամերգութենէն յետոյ ըստ աւանդութեան կը հաւաքուի Մարտիրոսը, աւանդականէն աւելի կանուխ. վասն զի արձակումը աւելի կանուխ տեղի կ'ունենար. այդ օրը պատարագ կը մատուցանեն մատրան մէջ, ժամը տասնին ժողովուրդը կ'արձակուի: Մատրանէն արձակուելէն յետոյ կու գան Խաչին առջև և ուր եպիսկոպոսը կը պատարագէ և ամէնքն ալ կը հաղորդուին: Տարուան մէջ Խաչին առջև երբեք չեն պատարագեր, բայց միայն այս օրը: Արձակումէն յետոյ Ս. Յարութիւն կ'երթան և կ'աղօթեն, ըստ աւանդութեան երախաները և հաւատացեալները կ'օրհնուին և յետոյ կ'արձակուին:

— Աւագ ուրբաթ երեկոյին՝ Խաչին երկրպագութենէն յետոյ ամէնքն ալ կ'երթան մեծ եկեղեցին որ է Մարտիրոսը. ուր, ըստ կանոնի, այս շաբթուան ինննէն մինչև վերջը կը մնան ու կ'աղօթեն: Արձակումէն յետոյ Ս. Յարութիւն կ'երթան ու կը կարդան այն աւետարանը որուն մէջ Յովսէփ Պիղատոսէն կը խնդրէ Տէրոջը մարմինը՝ թաղելու համար: Այս ընթերցումէն յետոյ երախաները կ'օրհնուին և կ'արձակուին: